

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԿԱԳԵՐԻ  
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

---

ԼՐԱԲԵՐ  
ՀԱՅԱՀԱՅԱԿԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ВЕСТНИК  
ОБЩЕСТВЕННЫХ  
НАУК

НАУЧНО-ОБЩЕСТВЕННЫЙ ЖУРНАЛ  
ԼՐԱԲԵՐ ԱԾԱՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1-2(630)

ՀՈՒՆՎԱՐ – ՕԳՈՍՏՈՒ  
ЯНВАРЬ – АВГУСТ

---

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն

**ՏԻԳՐԱՆ ԴԵՎՈՅՑԱՆՑԻ  
ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ**

ՎԻՐԱԲՅԱՆ Վ. Հ.

**Հայկական հետախուզության պատմության մեջ նշանակալի վաստակ ունի Տիգրան Դևոյցը, որն այդ համակարգի կարևոր դեմքերից է, նրա յուրօրինակ իրական ղեկավարներից մեկը<sup>1</sup>:**



Տիգրան Դևոյցը ծնվել է Երևանում: Հայտնի է, որ 1903 թ. նա արդեն ուսուական միջնակարգ դպրոցի սան էր: Ուսման ընթացքում մասնակցում է ցարական իշխանությունների կողմից հայեկեղեցու ունեցվածքը բռնագրավելու և հայկական դպրոցները փակելու դեմ սկսված աշակերտական հուզումներին, և այդ պատճառով հեռացվում է դպրոցի երրորդ դասարանից ու փախչում է Թիֆլիս: Նրա փոխարեն ձերբակալվում է եղբայրը Հակոբը, որը 5-6 ամսվա բանտարկությունից հետո ոստիկանապետին 5000ռ. կաշառք տալով՝ ազատվում է բանտից: 1904-1905 թթ., երբ Ռուսաստանում սաստկացան հակամիապետական տրամադրությունները, ցարական իշխանությունները, հեղափոխական խմորումների գեմն առնելու նպատակով, Բաքվում, Թիֆլիսում, Նախիջևանում և Հայաշատ այլ վայրերում կազմակերպում են հայ-թաթարական բախումներ: Ինչպես իր մարտական դասընկերը՝ Դրոն ('Իրաստամատ Կանայան), Դևոյցը նույնպես հայտնվում է այն հայրենանվեր մարդկանց շարքում, որոնք փորձում էին սատար կանգնել հայ աղդաբնակչությանը Անդրկովկասի հայաշատ քաղաքներում: Դևոյցը Թիֆլիսում, Շեյխան բազարի շրջանում կազմակերպում է մառզերներով զինված 12 հոգանոց մի խումբ՝ գործելով Ռուսումի (Ստեփան Զորյան) հրահանգներով:

1906 թ. վերաբացվեց Թիֆլիսի առևտրական դպրոցը, և ուսումնառությունը կիսատ թողած Տ. Դևոյցը փորձում է այն ավարտել, սակայն, դպրոցական վարչության բացասական վերաբերմունքի պատճառով, վերցնելով բոլոր վկայականները, մեկնում է Երևան, որտեղ ընդունվում է Երևանի դիմնագիայի 8-րդ դասարանը և հաջողությամբ հանձնելով քննությունները ավարտում այն: Երևանի

<sup>1</sup> Տե՛ս Hovannisian R. G. *The Republic of Armenia, vol. II, From Versailles to London, 1919-1920, Berkeley, Los Angeles, 1982, p. 68, 177, 489.*

զիմնազիայում չորս տարի ուսանելու ընթացքում նրա դասընկերներից էր Դրոն: Նրանք համատեղ ջանքերով ստեղծում են աշակերտական մարտական խումբ, որին անդամակցում էին Ա. Զալալյանը, Ղարիբյանը, Խոսրովը և ուրիշներ, թվով՝ 9-10 հոգի<sup>2</sup>:

Որոշ ժամանակ անց նա ընդունվում է Տոմսկի համալսարանի լեռնային ճարտարագիտական բաժինը: Ուսման ծախսերը հոգում էր նրա ընտանիքը, այդուհանդերձ, Դեոյանցը, մասնավոր դասեր տալով, ինքն էլ փորձում է օգնել իր ընտանիքին՝ հոգալով չորս եղբայրների և երեք քույրերի կարիքները: Տոմսկի համալսարանում ուսանելու տարիներին Դեոյանցը գործուն մասնակցություն է ունենում հեղափոխական շարժումներին՝ կապեր հաստատելով ՀՅ Դաշնակցության, Սոցիալիստ-հեղափոխական կուսակցության, Հրեական Բունդի, լեհ հեղափոխականների հետ, աջակցում Միքիրից մի շարք հայ հեղափոխականների փախուստի կազմակերպմանը:

Ուսական պատմության մեջ հայտնի ռեակցիայի ժամանակաշրջանում (1907-1912 թթ.) հետադիմությունը հարձակման է անցնում հեղափոխության դեմ և կազմակերպում մեկը մյուսից անարդար դատավարություններ՝ բազմաթիվ հեղափոխականների նըկատմամբ: Բանտարկվում է նաև Տ. Դեոյանցը, սակայն որոշ ժամանակ անց, հոր երաշխավորությամբ ազատ է արձակվում ու մեկնում Երևան, որտեղ ապրում է մեկուկես տարի՝ գիմնազիայի քննությունների համար նախապատրաստելով աշակերտներին:

Լիժինյան դատավարության ընթացքում (ցարական քննիչ Լիժինը հայտնի է Դաշնակցության նկատմամբ 1907-1912 թթ. կազմակերպած անօրինական դատավարությամբ) Տոմսկի համալսարանի ուսանող Տ. Դեոյանցը կրկին ձերբակալվում է: Նրա բանտային ընկերն էր Ռաֆֆու «Խենթի» հերոսի նախատիպ Արսենը («Խենթում»՝ Վարդան), որին Դեոյանցը որոշ առարկաներ է ուսուցանում նրա խնդրանքով: 1910 թ. Դեոյանցը փախչում է բանտից. այդ գործում նրան օգնում է նաև հայ նշանավոր վրիժառու, ազգային ազատամարտի նվիրյալ Յապոնը (Հովհաննես Պարոնյան)<sup>3</sup>: Դեոյանցի փախուստին, իր իսկ վկայությամբ, զգալի չափով օգնում է Երևանի ՀՅ Դաշնակցության կենտրոնական կոմիտեն: Դեոյանցը մոտ մեկ ամիս հյուրընկալվում է Դրոյի մոտ: Հենց Դրոյի գործուն աջակցու-

<sup>2</sup>Տե՛ս Դէոյեանց Տիգրան, Դրաստամատ Կանայեան (Դրօ) (Հայրենիք, Բոստոն, 1957, N 9 (379), էջ 11), տե՛ս նաև Գևորգյան Հ. Սեբաստացի Մուրադ, Ե., 2003, էջ 224:

<sup>3</sup>Այլ կերպ՝ Պարոնյան Հովհաննես - Սարգիսանյան Համբարձում (Յապոնացի Սաքո): ՀՅԴ նվիրյալներից էր: 1903 թ. հայ եկեղեցու կալվածքները բռնագրավող ցարական ոստիկանների և կազակների դեմ կազմակերպում է զինված դիմադրություն, իսկ արդեն 1905-1906 թթ. հայ-թաթարական կոհիների ժամանակ հատուցման գործողություններ է կազմակերպում և Շուշիում իրագործում ցարական միշտաքաղաքացիությունը պաշտոնաների, այդ թվում քաղաքի գլխավոր ոստիկանապետ Սախարովի, պրիստավ Շումակեհչի և այլոց ահաբեկումները: 1918-1920 թթ. նա դառնում է Զանգեզուրում խորհրդային իշխանության դեմ զինված հակամարտության կազմակերպիչներից մեկը: Սակայն Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Յապոնը ձերբակալվում է և 1920 թ. հոկտեմբերին գնդակահարվում գորիսի բանտում:

գիմնազիայում չորս տարի ուսանելու ընթացքում նրա դասընկերներից էր Դրոն: Նրանք համատեղ ջանքերով ստեղծում են աշակերտական մարտական խումբ, որին անդամակցում էին Ս. Զալալյանը, Ղարիբյանը, Խոսրովը և ուրիշներ, թվով՝ 9-10 հոգի<sup>2</sup>:

Որոշ ժամանակ անց նա ընդունվում է Տոմսկի համալսարանի լեռնային ճարտարագիտական բաժինը: Ուսման ծախսերը հոգում էր նրա ընտանիքը, այդուհանդերձ, Դեոյանցը, մասնավոր դասեր տալով, ինքն էլ փորձում է օգնել իր ընտանիքին՝ հոգալով չորս եղբայրների և երեք քույրերի կարիքները: Տոմսկի համալսարանում ուսանելու տարիներին Դեոյանցը գործուն մասնակցություն է ունենում հեղափոխական շարժումներին՝ կապեր հաստատելով ՀՅ Դաշնակցության, Սոցիալիստ-հեղափոխական կուսակցության, Հրեական Բունդի, լեհ հեղափոխականների հետ, աջակցում Սիբիրից մի շարք հայ հեղափոխականների փախուստի կազմակերպմանը:

Իւսուսական պատմության մեջ հայտնի ռեակցիայի ժամանակաշրջանում (1907-1912 թթ.) հետադիմությունը հարձակման է անցնում հեղափոխության դեմ և կազմակերպում մեկը մյուսից անարդար դատավարություններ՝ բազմաթիվ հեղափոխականների նըկատմամբ: Բանտարկվում է նաև Տ. Դեոյանցը, սակայն որոշ ժամանակ անց, հոր երաշխավորությամբ ազատ է արձակվում ու մեկնում Երևան, որտեղ ապրում է մեկուկես տարի՝ գիմնազիայի քննությունների համար նախապատրաստելով աշակերտներին:

Լիժինյան դատավարության ընթացքում (ցարական քննիչ Լիժինը հայտնի է Դաշնակցության նկատմամբ 1907-1912 թթ. կազմակերպած անօրինական դատավարությամբ) Տոմսկի համալսարանի ուսանող Տ. Դեոյանցը կրկին ձերբակալվում է: Նրա բանտային ընկերն էր Շաֆֆու «Խենթի» հերոսի նախատիպ Արսենը («Խենթում»՝ Վարդան), որին Դեոյանցը որոշ առարկաներ է ուսուցանում՝ նրա խնդրանքով: 1910 թ. Դեոյանցը փախչում է բանտից. այդ գործում նրան օգնում է նաև հայ նշանավոր վրիժառու, ազգային ազատամարտի նվիրյալ Յապոնը (Հովհաննես Պարոնյան)<sup>3</sup>: Դեոյանցի փախուստին, իր իսկ վկայությամբ, զգալի չափով օգնում է Երևանի ՀՅ Դաշնակցության կենտրոնական կոմիտեն: Դեոյանցը մոտ մեկ ամիս հյուրընկալվում է Դրոյի մոտ: Հենց Դրոյի գործուն աջակցու-

<sup>2</sup>Տե՛ս Դէոյեանց Տիգրան, Դրաստամատ Կանայեան (Դրօ) (Հայրենիք, Բուստոն, 1957, N 9 (379), էջ 11), տե՛ս նաև Գևորգյան Հ. Սեբաստացի Մուրադ, ե., 2003, էջ 224:

<sup>3</sup>Այլ կերպ՝ Պարոնյան Հովհաննես - Սարգիսանյան Համբարձում (Յապոնացի Սաքո): ՀՅԴ նվիրյալներից էր: 1903 թ. հայ եկեղեցու կալվածքները բռնագրավող ցարական ոստիկանների և կազակների դեմ կազմակերպում է զինված դիմադրություն, իսկ արդեն 1905-1906 թթ. հայ-թաթարական կոհիների ժամանակ հատուցման գործողություններ է կազմակերպում և Շուշիում իրագործում ցարական միշտաքանակ պաշտոնյաների, այդ թվում՝ քաղաքի գլխավոր ոստիկանապետ Սախարովի, պրիստավ Շումանկիչի և այլոց ահաբեկումները: 1918-1920 թթ. նա դառնում է Զանգեզուրում խորհրդային իշխանության դեմ զինված հակամարտության կազմակերպիչներից մեկը: Սակայն Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Յապոնը ձերբակալվում է և 1920 թ. հոկտեմբերին գնդակահարվում գորիսի բանտում:

թյամբ էլ (Դրոն Դեռյանցին թափրիդ տեղափոխող կառապանին հրահանգում է աչքի լույսի պես պահպանել Տիգրանին) Դեռյանցը ուղերգում է զեափի թափրիդ, որտեղ կար մեծ թվով հայություն<sup>4</sup>: Բայազետից թափրիդ տանող ճանապարհին նա մի շարք ծածկանուններ է փոխում՝ Հակոբ Հակոբյան, Աշոտ Հովսեփյան և այլն: Թափրիգում նրան դիմավորում է Սարգիս Կուկունյանի նախկին զինակիցը Նորքեցի Շերուկը՝ Բալաջանովը (Ստեփան Ստեփանյան), որը փախչելով Սախալինի տաժանակիր բանտից՝ հաստատվել էր թափրիգում: Այստեղ Դեռյանցը ոռւսաց լեզու, երկրաչափություն և հանրահաշիվ է դասավանդում Հայոց կեղրոնական դպրոցում: Ապրելով Նիկոլ Դումանի մոտ՝ նա մասնակցում է Դումանի խմբի աշխատանքներին: Միաժամանակ, Բաքվից Խ(Ք)րիստափոր Վերմիշեպից առաջարկ ստանալով՝ թղթակցում է «Բագու» և «Կավկազսկի տելեգրաֆ» թերթերին: Համագործակցությունը այդ թերթերի հետ շարունակվում է շուրջ 9 տարի՝ մինչև այդ թերթերի փակվելը: Իր հեղինակած նյութերը նա ստորագրում էր «Տիգր Դեռ», «Օմեգա» և «Աշոտ» կեղծանուններով, իսկ «Ալֆա» կեղծանունով թղթակցում էր ոռւս սոցիալիստ-հեղափոխականների «Զնամյա տրուդա» և թափրիգի «Առավոտ» թերթերին:

Շուտով թափրիգում ևս դժվարություններ են առաջանում, քանի որ առկա էր ձերբակալման վտանգը: Պարսկաստանը հեղափոխական կոիվների մեջ էր, գահընկեց էր արվել Մահմեդ Ալի շահը, թեհրանի ուղղությամբ շարժվում էր հայազգի հայտնի ռազմաքաղաքական և հասարակական գործիչ Եփրեմ խանը (Եփրեմ Դավթյան՝ ծնված 1886 թ., Շամխորի շրջանի Բարսում հայկական հայտնի գյուղում), որը թեհրանի դեմ գործող զորքերի զինվորական ընդհանուր հրամանատարն էր, և որին համարում էին Պարսկաստանի նապոլեոն: Այդ իրադարձությունները փոթորկում էին Պարսկաստանի հասարակական-քաղաքական կյանքը, իսկ հայերը վճռական դեր էին կատարում հեղափոխական շարժման մեջ: Դեռք բերելով տաճկական հյուպատոսարանի վկայական՝ Հակոբ Հակոբյան ծածկանունով, Նիկոլ Դումանի (որ գործում էր թափրիգի շրջանում՝ Կարա-Բաբա անունով), իշխանի և այլոց հետ Դիլմանի վրայով մտնում է Վանա լճի շրջան: Այստեղ նրանց ընկերակցում է Դրոն, և բոլորը միասին այցելում են Աղթամարի վանք: Այնուհետև պայմանավորվում են մեկնել Բայազետ և Էրզրումով անցնել Կ. Պոլիս<sup>5</sup>:

Առաջին աշխարհամարտի նախօրյակն էր: Դեպի Կ. Պոլիս ճանապարհի մի մասը նրան ուղեկցում է Դրոն, որին քրդերը մեծ հարգանքով են վերաբերվում: Սամսունում Տ. Դեռյանցը հանդիպում է Խաժակին (Փարեգին Զագալյան՝ ծնված 1867 թ., 1915 թ. Մեծ եղեռնի զոհ), որին նույնպես հաջողվել էր ձերբազատվել Լիժինյան դատավարության կապանքներից ու բանտային կյանքի հնարավոր շղթաներից և հայտնվել Սև ծովի առափնյա Օրդու քաղաքում, որտեղ մեծ թվով հայություն կար. մի մասը լուսավորչական, մյուսը

<sup>4</sup> Դէռյանց Տ., Կեանքիս դրուագներից (Հայրենիք, Բոստոն, 1944, N 1(240), յունուար-փետրուար, էջ 77-82):

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 90:

բողոքական դավանանքի պատկանող: Խաժակը Տ. Դեոյանցին առաջարկում է այդ քաղաքի ազգային վարժարանների տեսչի պաշտոնը՝ ավելի քան 20-25 դասատունների և մոտ 800 աշակերտների նկատմամբ վերահսկողության իրավունքով: Տեսչի պաշտոնը ստանձնելու համար Տ. Դեոյանցը հանձնում է Համապատասխան քննություն և ստանում «Մաթեմատիկայի մասնագետ» տիտղոսը<sup>6</sup>:

1913 թ. գարնանը Տ. Դեոյանցը գտնվում էր Կ. Պոլսում, իսկ սեպտեմբերին արդեն Օրդու քաղաքում էր, որտեղ ստանձնում է ազգային երկու դպրոցների տնօրինությունը: Այդ ժամանակամիջոցում նա շարունակում էր աշխատակցել մի շարք ոռւսական թերթերի. թղթակցություններում կային փաստեր և զանազան տվյալներ թուրքական զորքերի տեղաշարժերի մասին: Սակայն սկսվում է Առաջին աշխարհամարտը, և փորձելով խուսափել զորակոչից (1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո, Համապատասխան օրենքի համաձայն, Հայերին ևս սկսում են զորակոչի ենթարկել, մինչդեռ նախկինում նրանք դրա փոխարեն զինվորական տուրք էին վճարում) նա Հարցումով դիմում է Բաթում և խնդրում իրեն ուղարկել պարսկահպատակի անձնագիր, որը շուտով ստանալով՝ ներկայանում է Կ. Պոլսի ոռւսական փոխհյուպատոս Մաքսիմովին: Վերջինս նրան աջակցում է բոլոր գործերում: Նշենք, որ ոռւսական զորքերի կողմից էրզրումը գրավելուց (18.II.1916) հետո Մաքսիմովը Կովկասյան բանակի սպայակույտում էր: Տ. Դեոյանցը մտերմանում է նրա հետ, և երբ 1917 թ. փետրվարյան օրերին Մաքսիմովը ձերբակալվում է բանակի զինվորների և բանվորների խորհրդի կողմից, Տ. Դեոյանցի միջնորդությամբ նրան ազատում են կալանքից<sup>7</sup>: Բաթումի ճանապարհին Տ. Դեոյանցը շարունակում է Հայթայթել տարաբնույթ նյութեր թուրքական զորահավաքի, ինչպես նաև Սամսունի, Օրդուի, Տրապիզոնի, Ռիզիեի իրադարձությունների մասին՝ ոռւսական բանակի հետախուզական մարմիններին ներկայացնելու համար: Նա իր հետ վերցնում է Մակու-Թավրիզ-Վան-Բայազետ-Էրզրում-Տրապիզոն-Կ. Պոլիս ճամփորդության մասին հուշագրությունը՝ ոռւսական բանակի հետախուզական մարմիններին ներկայացնելու համար: Բաթումում նրան սպասում էին, քանզի այդ մասին Մաքսիմովը տեղեկացրել էր Բաթումի զինվորական իշխանություններին<sup>8</sup>: Բաթումում եղած ժամանակ, կապված Լիֆինյան դատարանի կողմից դատապարտված լինելու և դեռևս օրինապես արդարացված չլինելու հանգամանքի հետ, նրան ներում շնորհելու միջնորդությամբ է հանդես գալիս Պետական դումայի անդամ Միքայել Պապաջանյանը, և Տ. Դեոյանցն արդեն կարող էր անարգել վերադառնալ Ռուսաստան:

1914 թ. Հոկտեմբերին՝ Կ. Պոլսից վերադառնալուց որոշ ժամանականց, Տ. Դեոյանցը նորից փորձում է մտնել Թիֆլիսի զինվորական

<sup>6</sup> Նույն տեղում, մարտ-ապրիլ, 1944, 2 (241), էջ 88-90:

<sup>7</sup> Տե՛ս Դեոյեանց Տ., Հետախոյզի մը յուշերը (Վէմ, Փարիզ, 1938, N 2, յունու-ար-մայիս, էջ 48):

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 49:

դպրոց<sup>9</sup>, սակայն այդ մտադրությունը իրագործել չի հաջողվում: Հանգամանքների բերումով նա կրկին հանդիպում է իր նախկին դասընկերոջը՝ Դրոյին: Դրոն Տ. Դևոյանցին իր հետ տանում է իգդիր, նրան է նվիրում մի ճերմակ ձի՝ Զեմլյակի<sup>10</sup> հեծյալ հարյուրյակում ծառայելու համար, և պատվիրում գրել այդ զորամասի կոփների պատմությունը<sup>11</sup>:

Առաջին աշխարհամարտի ժամանակ կազմավորվում է գեներալ Պյոտր Օգանովսկու գլխավորությամբ գործող զորամասը, որի սպայակույտը հաստատվում է իգդիրում: Ազգային բյուրոյի կողմից ընտրվում է «Կարգադրիչ մարմին», որը պետք է զբաղվեր կամավորական ջոկատների կազմակերպման և ուղղորդման գործերով: Այդ մարմնի հրահանգով իգդիրում ստեղծվում է Հայկական սպայակույտ, որտեղ Տ. Դևոյանցը ռուսական զինվորական իշխանությունների հետ հարաբերությունները կարգավորողը, ավելի ճիշտ ռուսական Զորքորդ կորպուսի սպայակույտի հետ հարաբերությունների ապահովման պատասխանատուն էր: Տ. Դևոյանցը թուրքական ուժերի մասին իգդիրի Հայկական սպայակույտի միջոցով ձեռք բերած արժեքավոր տեղեկությունները հաղորդում էր Պ. Օգանովսկու գլխավորած կորպուսի հետախուզական բաժնի պետ՝ գլխապետ (կապիտան) Վլադիմիր Օգոլին: Հայերի և Հայկական հարցի նկատմամբ շատ լավ տրամադրված այս անձնավորության ջանքերով Քանաքեռում հիմնվել էր սպաների պատրաստման դպրոց հայ կամավորական խմբերի համար. այստեղ Օգոլը նաև դասախոսում էր: Հաճախելով սպայական դասընթացներին՝ Դևոյանցը գիտելիքներ էր ստանում հետախուզական գործի կազմակերպման մասին: Միաժամանակ, այստեղ ձեռք բերված տեղեկությունները, պայմանավորվածության համաձայն, ուղարկվում էին Ռոստոմին, որը կամավորական խմբերի Կարգադրիչ մարմնի անդամ էր<sup>12</sup>:

Որոշ ժամանակ անց Տ. Դևոյանցը հայտնվում է Կովկասյան ռազմաճակատի ընդհանուր սպայակույտի հետախուզական բաժանմունքի պետ, գնդապետ Պ. Դրացենկոյի ուշադրության կենտրոնում, որը, հայ հետախույզի մասին հարցում անելով Վ. Օգոլին, խնդրագրով դիմում է Ռոստոմին՝ Տ. Դևոյանցին իգդիրի Հայկական սպայակույտից դուրս բերել և իր տրամադրության տակ դնել՝ հետախուզական հատուկ աշխատանքների համար, մասնավորապես Մանազկերտի շրջանում գործելու նպատակով՝ կապը Մուշի և Բիթլիսի միջև ապահովելու համար: Դրանից հետո Դրացենկոյի պահանջով Տ. Դևոյանցը և Ռոստոմը մեկնում են Կարս, որտեղ գտնվում էր բանակի ողջ սպայակազմը: 1915 թ. ամռանը Տ. Դևոյանցը ուղևորվում է Մանազկերտ, որը էին գրավել ռուսական զորքերը (Բու-

<sup>9</sup> Նույն տեղում:

<sup>10</sup> Նանումյան Հարություն. Առաջին աշխարհամարտի տարիներին հայտնի էր որպես հեծյալ հարյուրյակի պետ, որի կազմում էր նաև Տ. Դևոյանցը: Զեմլյակը գոհվեց 1917 թ. (տե՛ս Աշխատավոր, Թիֆլիս, Յ. VI. 1919, N 108):

<sup>11</sup> Դէյսեանց Տ., Հետախոյզի մը յուշերը, Էջ 49, տե՛ս նաև նույնի՝ Կեանքիս դրուագներից (Հայրենիք, Բոստոն, 1943, N 5, սեպտեմբեր-հոկտեմբեր, Էջ 52):

<sup>12</sup> Դէյսեանց Տ., Ինանքիս դրաւագներից (Հայրենիք, 1943, N 5, Էջ 52-53):

լանուխ-Մանազկերտի ազատագրմանը նախորդել էր Վանի գրավումը), և ոռուսական Հրամանատարության ու Հայ ազգային մարմինների փոխադարձ Համաձայնությամբ, սկսում է զբաղվել Մուշի և Բիթլիսի միջև կապի հաստատմամբ՝ փորձելով տեղեկություններ Հայթայթել նաև Էրզրումի ռազմաճակատի վերաբերյալ<sup>13</sup>, քանի որ նրան էր Հանձնարարվել Էրզրումի հետախուզությունը: Տ. Դեոյանցին հաջողվում է Խնուսի, Մուշի և Բիթլիսի շրջաններ ուղարկել 10-15 հետախույզներ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մանազկերտի (Վանա լճի) շրջանում գտնվում էին Հալեպից, Տիգրանակերտից, Խարբերդից, Մալաթիայից, Մուշից ու այլ Հայաբնակ վայրերից տարագրված տասնյակ հազարավոր Հայ փախստականներ, և այդ հանգամանքը խիստ կարևորել էր մշտական կապի ապահովումը Ռուբեն Տեր-Մինասյանի և Վ. Փափազյանի (Կոմս) հետ՝ Մուշ-Սասուն տարածքի նկատմամբ վերահսկողության ապահովման նկատառումներից ելնելով<sup>14</sup>: Այդ խնդրի իրագործման համար Դեոյանցին են տրամադրվում նաև հինգ կամավորներ<sup>15</sup>: Ստացված արդյունքների մասին զեկուցագրերը ներկայացվում էին գնդապետ Դ. Դրացենկոյին, Ազգային բյուրոյին և ՀՅԴ բյուրոյին<sup>16</sup>:

Հայ հետախույզի Տ. Դեոյանցի կենսագրության մեջ հատուկ տեղ է զբաղեցնում Հենց 1915 թ. ապրիլ-մայիս ժամանակահատվածը, երբ նա իր 5 զինակիցներով հայտնվում է Մանազկերտում՝ Մուշի և Բիթլիսի միջև կապ հաստատելու հեռահար նպատակով: Այնուհետև Դեոյանցը Կովկասյան բանակի Հրամանատարության կողմից գործուղվում է Էրզրում հետախուզության, իսկ արդեն Երզընկան գրավելուց հետո հիմնավորվում է նաև այնտեղ: Սակայն շուտով, կապված Վան-Մանազկերտի շրջանից ոռուսական զորքերի հայտնի «անակնկալ մեծ նահանջի» հետ, Ռուստոմի և Արամի (Արամ Մանուկյան) առաջարկությամբ շտապ Մանազկերտ է մեկնում Կ. Սասունին՝ իր կուսակցական ընկերների հետ պարտականություն ունենալով քննել Տիգրան Դեոյանցի գործը: Վերջինս տվյալ պահին լինելով զոր. Օգանովսկու գլխավորած 4-րդ կորպուսի հետախուզական բաժնի վարիչ իբր թե սխալ, անճիշտ զեկուցումներ էր ներկայացրել ոռուսական Հրամանատարությանը և ջանք չէր գործադրել, որպեսզի ոռուսական զորքերը շարժվեին դեպի Մշո դաշտ իրենց գործողությունները Համաձայնեցնելով դեպի Դատվան և Բիթլիս առաջացող Հայկական կամավորական գնդերի հետ: Հարկ է նշել, որ հիմնովին սխալ են Կ. Սասունու մեղադրանքները Տ. Դեոյանցի հասցեին, թե իբր վերջինիս Հանձնարարված էր «ամեն ջանք թափել», որպեսզի «ոռուսական բանակը տրամադրվեր առաջ գնա-

<sup>13</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության կենտրոնական արխիվ (Բոստոն), Թղթաձրար, ՍՎ. 78-8:

<sup>14</sup> Դեոյանց Տ., Կեանքիս դրուագներից, 1943, N 5, էջ 54:

<sup>15</sup> Նույն տեղում:

<sup>16</sup> Նույն տեղում:

լու», որը, սակայն, չի հաջողվում<sup>17</sup>: Իբր Տ. Դեռյանցը չափազանցրել էր թրքական հարձակողական ուժերի թիվը՝ 70000 զինվոր. այն իբր եղել է 30000-ի մոտ, և դա էլ իբր պատճառ է դարձել ոռւսական զորքերի ընդհանուր նահանջի համար ամբողջ ճակատում<sup>18</sup>: Սա, իհարկե, անլուրջ մոտեցում էր, և չի կարող դիտվել որպես փաստարկված պատճառաբանություն: Տ. Դեռյանցը ինքն էլ հետեղականորեն ու վճռականորեն, տարբեր առիթներով հերքում էր դա<sup>19</sup>: Նա բազմաթիվ ապացույցներ է բերում այն մասին, որ անկախ որևէ հանգամանքից, ոռւսական բանակը միշտ էլ ամենաճիշտ և ստույգ տեղեկություններ ուներ թշնամու ուժերի դասավորության, քանակի և այլնի մասին՝ իրենց զորամասերի NN-ով, մնում էր միայն հետևել թիկունքում թշնամու ուժերի փոփոխություններին, ինչով և մանրակրկիտ կերպով զբաղվում էին հետախուզական գործի կազմակերպիչները: Տ. Դեռյանցը համոզված էր, որ «անկարելի էր սխալվել թշնամու ուժերի տեղափորման, դասավորման մասին, իսկ կովկի միջոցին միշտ ունեինք գերի կամ փախստականներ, որոնց միջոցով ճշտում էինք թշնամու նոր դասավորությունը»<sup>20</sup>:

Առնվազն միամտություն է ոռւսական զորքերի 1915 թ. հուլիսյան (20-23) նահանջը միակողմանիորեն կապել Տ. Դեռյանցի հաղորդած տեղեկությունների և նրա հետախուզական գործունեության հետ: Կ. Սասունու անհիմն մեղադրանքների կապակցությամբ Գ. Լազյանը գրում է. «Կը կարծենք, թե այս մեղադրանքները չափազանցություն են. ոռւս հրամանատարությունը այս կամ այն զինվորական կարեոր շարժումը՝ նահանջ կամ հառաջխաղաղացում՝ չի կատարել միայն մեկ տեղեկության վրա հենվելով»<sup>21</sup>: Անշուշտ, սխալ է նաև Վ. Փափազյանը, որը, մեղմ ասած, անլուրջ պատճառաբանությամբ, Տ. Դեռյանցին մեղադրում է ոռւսական զորքերի նահանջի մեջ՝ կարծելով, թե գեներալ Պ. Օգանովսկին և առահասարակ ոռւսական բանակի հետախուզական ծառայությունը իրենց ողջ գործելակերպը կառուցել էին՝ հենվելով միմիայն Դեռյանցի տեղեկությունների վրա, ինչը հետագայում վերոհիշյալ զորավարը փորձել է սովիետ և անհեթեթ «արդարացումներով» հերքել<sup>22</sup>: Բոլորովին անընդունելի է նաև այն տեսակետը, որի համաձայն, զորավար Անդրանիկը ոռւսական զորքերի այդ հայտնի նահանջի ու իրադրձությունների զարգացման վրա աղդող վճռորոշ պատճառ է համարել Կովկասյան բանակի շտաբին կից հետախուզության աշխատակից, գեներալ Պ. Ի. Օգանովսկու գլխավորած 4-րդ կորպուսի հետախուզական բաժնի վարիչ, պրապորշչիկ Տիգրան Դեռյանցին: Առա-

<sup>17</sup> Սասունի Կ., Տաճկահայաստանը ոռւսական տիրապետության տակ (1914-1918). Տաճկահայոց գաղթաշարժը եւ անոնց գերը Հայաստանի Հանրապետութեան կազմութեան մէջ, Բոստոն, 1927, էջ 77:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 80-81:

<sup>19</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության կենտրոնական արխիվ (Բոստոն), Թղթածրար, ՍՎ.78-8:

<sup>20</sup> Նույն տեղում:

<sup>21</sup> Լազյան Գ., Հայաստան և Հայ դատը, Ե., 1991, էջ 182:

<sup>22</sup> Փափազեան Վ., իմ յուշերը, Հ. երկրորդ, Պէյլութ, 1952, էջ 412-415:

վել ես, երբ ինքը՝ Անդրանիկը, Տ. Դեոյանցին նաև իր կողմից ներկայացվող մեղադրանքների կապակցությամբ նշում է, որ դա կարող է լինել ցարական կառավարության հերթական դավը հայ ժողովրդի դեմ<sup>23</sup>: Ասենք, որ զորավար Անդրանիկը 1917 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին տեղի ունեցած Հայոց ազգային համախորհրդակցության (ՀԱՀ) նիստերի օրերին կրկին անդրադառնում է 1915 թ. հուլիսին վան-Մանագկերտ ուղղությամբ ուստական զորքերի խուճապահար նահանջի պատմությանը և այդ հարցի հետ կապված կրկին մեղադրում Տ. Դեոյանցը: Տ. Դեոյանցը չի երկնչում մեղադրանքների տարափից և գրավոր դիմում է ներկայացնում ՀԱՀ-ի նիստի նախագահին մեղադրանքների առնչությամբ հիմնավոր բացատրություն տալու պահանջով. «Պ. Նախագահ, որովհետեւ Վանի ընդհանուր նահանջի մասին պատմությունը այդ հարցի մասին մասին (2-րդ դիվիզիա) և հետևաբար նահանջի պատճառը ես եմ եղել, կիսնդրեի կրկին բարեհաճեիք ժողովի համաձայնությամբ թույլ տայիք ինձ, որպես բացառություն, տայի իմ բացատրությունները այդ ընդհանուր նահանջի մասին»<sup>24</sup>: Բայց քանի որ Տ. Դեոյանցը պատգամավոր չէր, ուստի այդ հարցի շուրջ պարզություն մտցնելու իրավունքը նա վերապահում է իր դասընկեր ու զինակից Դրաստամատ Կանայանին (Դրո), որից հետո ՀԱՀ-ը հարցը համարում է փակված: Զբարարվելով խնդրի այդպիսի հանգուցալուծումով և իրեն մեղավոր չգտալով Տ. Դեոյանցը «Հորիզոն» թերթի 1917 թ. նոյեմբերի 16-ի համարում հանդես է գալիս ծավալուն հոդվածով: Նա հայտնում է իր տեսակետը, որ եթե գեներալ Պ. Օգանովսկին ժամանակին ուշադրություն դարձներ հայ հետախույզների տեղեկություններին և հարկ եղած միջոցառումները ձեռնարկեր, ապա չէին լինի ինչպես ողբերգական խուճապային նահանջը, այնպես էլ այդ օրերի հայ բնակչության կոտորածները: «Մանագկերտից առաջ շարժվելիս, գրում է Տ. Դեոյանցը, - ամենակարևորը պետք է ապահովվեր մեր զորքերի աջ թեր Մանագկերտ-Խնուս գծի վրա, որպեսզի թույլ չտրվեր թշնամուն Քյոփրիքյոյի ուղղությունից գուրս գալ մեր թիկունքը: Գեներալ Օգանովսկին և իր շտաբի նաչալնիկ, կաթվածահար, բայց Յուղենիչի բարեկամ գեներալ Ռյաբինսկին այդ չարեցին: Նրանք մինչև անգամ Եփրատ գետի միւս ափում Կարաչաբանի ուղղությամբ չթողեցին փոքրիկ ձիավոր խուզարկու խմբեր, այլ մեկ բատալիոն հետևակ դնելով Մանագկերտի մեջ, որպես պահեստ, շարժվեցին Մշո վրա առանց կազմակերպելու մատակարարման շարժվեցին Մշո վրա առանց կազմակերպելու մոտ 200 վերստ...», որից գործը և առաջ անցան Մանագկերտից մոտ 200 վերստ...»<sup>25</sup>, որից օգտվեցին թուրքերը և հակահարձակման անցնելով՝ կրակի տակ առան հարկադիր նահանջի ճանապարհը բռնած ուստական զորքերին ու գաղթականների սովալլուկ խմբերին: Հետևանքն այն է լի-

<sup>23</sup> Սիմոնյան Հ. Անդրանիկի ժամանակը, գիրք Ա. Ե., 1996, էջ 464-465:

<sup>24</sup> Հայոց ազգային համախորհրդակցությունը, Թիֆլիս, 1917 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր, փաստաթղթեր ու նյութեր, պրոֆ. Վ. Ն. Ղազախեցյանի խմբագրությամբ (Բանբեր Հայաստանի արխիվների, 1992, N 1-2, էջ 150):

<sup>25</sup> Հորիզոն, Թիֆլիս, 17.XI.1917, N 246:

նում, որ ռուսական բանակի գլխավոր հրամանատարությունը պաշտոնանկ է անում գեներալ Պ. Օգանովսկուն, որն այդ օրերին ռազմաճակատ եկած Կ. Սասունու և Ռուբեն Տեր-Մինասյանի հետ հանդիպման ժամանակ (որին ներկա է եղել նաև Դեոյանցը), ինչ-ինչ նկատառումներից ելնելով՝ «ռուսական բանակի նահանջի» խընդրում մատնացույց է անում վերջինիս: Այդուհանդերձ, Տիգրան Դեոյանցը պարզեատրվում է Սբ. Աննայի «Քաջության համար» շքանշանով և էրզրումի գրավումից հետո նույն պաշտոնով տեղափոխում է բանակի շտաբ: Այդ մասին «Հորիզոնի» 1917 թ. նոյեմբերի 17-ի համարում Դեոյանցը գրում է հետևյալը. «Այստեղ պետք է նկատի առնել մի այլ պարագա: Ես՝ գտնվելով խուզարկու գործի վարիչի պաշտոնով Մանագկերտում, ոչ մեկ կապ չունեի Վանի շրջանի ռազվեդկայի հետ, միայն թե պարտք էի համարում իմ ստացած լուրերի պատճենները հայտնել Արարատյան գնդին (Վարդանին) ի գիտություն: Իսկ ինչ վերաբերում էր իմ պաշտոնին, ես ապրելով Մանագկերտում, անկախ էի իմ պաշտոնի մեջ և ստացված լուրերը, եթե կասկածելի էին, վերապահությամբ հաղորդում էին կորպուսի շտաբին, որն ուներ իրեն խուզարկու գործերի վարիչները, որոնք ստուգում էին իմ լուրերը այլ աղբյուրներից, ապա հաղորդում զորամասերին»<sup>26</sup>: Այնպես որ, դիմելով ՀԱՀ-ին՝ Դեոյանցը ներքին համոզմունք ուներ իր իրավացիության մեջ և վստահաբար մերժում էր ինչպես Կ. Սասունու, այնպես էլ այլոց առաջին հայցքից «անհերքելի և անխոցելի ապացույցները» Վան-Մանագկերտի 1917 թ. հուլիսյան իրողությունների ժամանակահատվածում թույլ տրված շահարկումների, այդ թվում իբր թե 20.000 փություն վատնելու, դրամաշորթության, կողոպուտների և սպանությունների հարցում՝ վկայակոչելով տարբեր փաստացի տվյալներ և ազգային գործիչների: Տիգրան Դեոյանցը իր թողած ձեռագիր վկայակոչումներում, որոնք պահպան են նաև Հայաստանի ազգային արխիվի պահպաններում, հերքում է իրեն ներկայացված մեղադրանքը, թե իբր թուրքական զորքերի մասին ինքը ուղարկու թվեր (70 հազար զինվոր) է տվել, մինչդեռ, ընդհակառակը, Ս. Վրացյանին, Ռ. Տեր-Մինասյանին և Վ. Փափազյանին ներկայացվել են թուրքական ընդամենը 25-35 հազարի չափով զորքի մասին տվյալներ: Ինչ վերաբերում է հայտնի նահանջին, Տ. Դեոյանցը այդ չարաբաստիկ նահանջի պատճառներից ամենագլխավորը համարում է հենց այն, որ գեներալ Օգանովսկին, առանց ապահովելու իր կորպուսի աջ թևը, առանց պատնեշ դնելու եփրատի մյուս ափին Մանագկերտի մոտ (Նուրէդդին գյուղի ուղղությամբ), Մանագկերտում թողնելով միայն մեկ գումարտակ զինվոր (600 հոգի), տեղաշարժվել է դեպի Մուշ և Բիթլիս<sup>27</sup>: Վերն ասվածի կապակցությամբ միանգամայն տրամաբանված է Տ. Դեոյանցի եզրակացությունը. «...Որովհետև ես պատգամավոր չեմ, խորհրդաժողովը մերժեց ինձ ձայն տալ այդ մասին բացատրություններ ներկայացնելու համար, իսկ նախա-

<sup>26</sup> Նույն տեղում:

<sup>27</sup> Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետեւ՝ ՀԱԱ), ֆ. Կ-1457, գ. 2, գ. 28, թ. 12-17 հակ.:

գահը խոստացավ ձայն տալ ինձ հաջորդ նիստի ժամանակ, կրկին խոսք չտրվեց ինձ: Ընկ. Դրոն, ստանալով ինձանից այդ հարցի նկատմամբ իմ ունեցած փաստաթղթերը հերքեց պ. Անդրանիկի ասածը, և խորհրդաժողովը հարցը համարեց փակված»<sup>28</sup>: Տ. Դեոյանցը ցավով զրում է. «Բայց հարց է ծագում, կարելի՞ էր, արդյոք, այդպես թեմեւ կերպով անցնել մի խնդրի վրայից, որ դարձավ այդքան մեծ դժբախտությանց պատճառ ամբողջ գրավված փայրերի ազատված հայերի համար: Կարծում եմ՝ ոչ, նամանավանդ, եթե նկատի ունենանք ժողովրդի մեջ մինչև օրս էլ շարունակվող շշուկները, որ իրը թե այդ նահանջը եղել է նախօրոք կազմակերպված և մտածված: Կարծում եմ, որ ամենալավ ելքերից մեկը այն կլիներ, որ Ազգային խորհրդաժողովը կազմեր մեկ հանձնախումբ, որին հանձներ այս նահանջի պատճառները մանրամասն կերպով քննել գեթ ապագա պատմության համար»<sup>29</sup>:

1919 թ. նոյեմբերին Երևանում բացված ՀՅԴ Թ-րդ Հնդհանուր ժողովի<sup>30</sup> կուսակցական դատական ատյանը քննարկում է տվյալ գործը, սակայն այն անավարտ է մնում, ըստ երեսութին, ներկայացված փաստարկումների կիսատպության պատճառով<sup>31</sup>: Հատկանշական է, որ ժամանակակիցներից ոչ բոլորն են համաձայնվում Տ. Դեոյանցին ներկայացված մեղադրանքներին: Այսպես, Ա. Վրացյանը գրում է. «Դէոյեանցը մեր Երևանի ընկերներից էր: Իբրեւ տարագիր, ապրել էր Թուրքիայում, ուր լայն ծանոթութիւններ ունէր: Այժմ սպայ էր, 4-րդ կորպուսի հետախուզական մասի վարիչ: Ճարպիկ եւ բանգէտ երիտասարդ էր: Արագ լուրեր էր հայթայթում թշնամու ոյժերի, ծրագիրների եւ գործողութիւնների մասին, որոնց շուրջ երբեմն կասկածներ ու վէճեր էին ծագում: Հակառակ որ ինքը վճռական հերքումներ է հրատարակել, մինչեւ այժմ էլ նրան մեղադրում են, որ անճիշդ տեղեկութիւններով թրքական ոյժերի եւ գործողութիւնների մասին՝ պատճառ է եղել Տարօնի շրջանի հայութեան ընաջնջման: Ես անձնապէս փաստ չունեմ նրան մեղադրելու այդ ուղղութեամբ»<sup>32</sup>: Հարցի առնչությամբ բազմանշանակ և սպառիչ պարզաբանումներ է տալիս Տ. Դեոյանցը բերելով հիմնավոր և համոզիչ հակաֆաստարկները. «Ես... ուղարկւած էի բանակի հետախուզական բաժանմունքի պետ Դրացենկոյի, Ազգ. եւ Հ.Յ.Դ. Բիւրոներու կողմէն Մանազկերտ կապւելու Մշոյ եւ Սասնոյ ուժերուն հետ, գիտակ պահելու գանոնք կատարած շարժումներուն եւ անոնցմէ ստացած տեղեկութիւնները հաղորդելու յիշեալ մարմիններուն

<sup>28</sup> Հորիզոն, Թիֆլիս, 17.XI.1917, N 246:

<sup>29</sup> Նույն տեղում: Նշենք, որ ըստ Ա. Հարությունյանի՝ գեներալ Պ. Օգանովսկուն Վան-Մանազկերտ նահանջի համար մեղադրական ներկայացնելը անհիմն է, չպատճառաբանված (Հարությունյան Ա., Սարիղամիշի ճակատամարտի դերը Կովկասը թուրքական ներխուժման վտանգից փրկելու գործում (1914 թ. դեկտեմբեր), (Բանքեր Հայաստանի արխիվների, 1967, N 2, էջ 102):

<sup>30</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. Կ-1457, գ. 2, գ. 22, թ. 1-2, 4-9 հակ., գ. 28, թ. 12-17 հակ.:

<sup>31</sup> Դէոյեանց Տ., Հետախոյզի մը յուշերը (Վէմ, 1938, յունուար-մայիս, N 2, էջ 48-55, N 3, յունիս-սեպտեմբեր, էջ 58-73):

<sup>32</sup> Վրացեան Ա., Կեանքի ուղիներով. Դէպքեր. Ապրումներ, հ. 9, Պէյրութ, 1963, էջ 96-97:

եւ Դրացենկոյին։ Այդ չէր նշանակեր «լռելեայն կը հասկցւեր, որ Տ. Դ. ամէն ջանք պիտ թափէր, որ ոռւսական բանակը տրամադրւէր յառաջ խաղալու»։ Մվ էի ես, ի՞նչ իրաւունքներ ունէի ձեռքս, որու հետ կը տեսնեէի Մանագկերտի մէջ – յառաջապահ բանակի սպաներու հետ միայն։ Եթէ ես զօրք ունենայի, կամ իրաւունք, վըստահ եղէք, ձեռքէս եղածը կընէի բանակը յառաջ շարժելու համար, բայց ձեռքիս ոչ մէկ իրաւունք չկար։ Մի մոռացէք, որ նոր էի սպայ եղած եւ նոր եկած Մանագկերտ, ուր մնացի ընդամենը երկու եւ կէս ամիս։ Բանակը առաջ խաղցնելու պարտականութիւնը Կ. Սասունիներուն էր վերապահւած, թիկունքի գործիչներուն, ես միայն մէկ պարտականութիւն ունէի՝ ստացած լուրերս տեղեկագրել ուր հարկն է, մնացեալը կը մնար Ազգային եւ Հ.Յ.Դ. Բիւրօներուն, որոնք շատ աւելի լաւ կապեր ունէին կեղրոնի սպայակոյտի հետ, քան թէ ես։ Անոնք է, որ պէտք է ստացւած լուրերը ոչ թէ կարդային, որպէս լրագրական լուրեր, այլ կեղրոնի սպայակոյտի միջոցով օգտագործէին, որ «բանակը տրամադրւէր առաջ խաղալու»<sup>33</sup>։ Իսկ ահա թե ինչ է գրում Հովհ. Քաջազնունին. «Ռուսների ընթացքը (նահանջը - Վ. Վ.) բացատրելու համար բնաւ անհրաժեշտ չէր ենթադրել, թէ նրանք ծրագիր ու դիտավորութիւն են ունեցել մեզ կոտորելու, այլ բաւական էր միայն ենթադրել, թէ նրանք չեն ունեցել նպատակ փրկել թուրքահայութիւնը ինչ գնով էլ լինի։ Իսկ այդպիսի նպատակ նրանք, իհարկե, չեն ունեցել, մենք ենք եղել, որ վերագրել ենք նրանց մեր ցանկութիւնները, եւ երբ իրականացրած չենք տեսել այն՝ դաւադրութիւն ենք որոնել»<sup>34</sup>։ Կարծում ենք սրանով ամեն ինչ ասված է, քանզի ակնհայտ է, որ եթե ոռւսները կարողանային իրադարձությունների զարգացման այլ ռազմավարություն մշակել, անկասկած, կանեին, և դրանում հայ բնակչությունը խոչընդուռ չէր լինի, մանականդ որ նրանք լիովին համոզված էին հայերի հավատարմության մեջ գտնելով նաև, որ հայ բնակչության պահպանումը տվյալ տարածքում անհետաձգելի և անհրաժեշտ խնդիր է։

Տ. Դեոյանցի եզրակացությունները հիմնավոր են. «Մանագկերտի նահանջէն յետոյ ես այլեւս ո եւ է յանձնարարութիւն չունէի Ազգ. եւ Դաշն. Բիւրօներէն եւ անցայ Գրդ կորպուսի սպայակոյտի մէջ։ Եթէ այդպիսի սխալ արած լինէի, վստահ եղէք, որ ոչ թէ միայն զիս չէին պահեր որպէս հետախոյզ, այլ դատի կուտային կամ կը վոնտէին հետախուղական բաժանմունքէն։ Ընդհակառակը, վերջը էրզրումը դրաւելէ երեք ամիս առաջ, ինձ յանձնեցին միաժամանակ էրզրումի հետախուղութիւնը եւ աստիճանաբար ես բարձրացայ մինչև կովկասի ճակատի հակահետախուղական բաժանմունքի պետի պաշտօնը»<sup>35</sup>։ Տ. Դեոյանցը, որը միակ հայ սպան էր ոռւսական հետախուղական ծառայության մեջ, և պատերազմի առաջին իսկ օրից մինչև վերջ գտնվում էր այդ համակարգում, պնդում էր, որ

<sup>33</sup> Դէոյեանց Տ., Հետախոյզի մը յուշերը (Վէմ, 1938, N 3, յունիս-սեպտեմբեր, էջ 69-70)։

<sup>34</sup> Քաջազնունի Յովհ., Հ.Յ.Դաշնակցութիւնը անելիք չունի այլեւս, Վիեննա, 1923, էջ 9։

<sup>35</sup> Դէոյեանց Տ., Հետախոյզի մը յուշերը, էջ 72։

ռուսական բանակի նահանջը պայմանավորված է եղել զուտ ռազմագիտական նպատակով՝ անհրաժեշտաբար, իսկ ինքը դրա հետ որևիցե առնչություն չուներ: Տեղին է նշել, որ ինքը Դեոյանցը, շատ հասկանալի պատճառներով կարող էր ամենեին էլ լիակատար տեղեկացված չլինել ռուսական զորքի ողջ անցուղարձից, ինչը կատարված իրաղարձությունների հետևանքների գնահատման տեսանկյունից նրան չի կարող դարձնել գլխավոր պատասխանատու, առավել ևս մեղադրյալ:

Ինչևէ, Երզրումում Դեոյանցը օգտաշատ գործունեություն է ծավալում՝ տարածաշրջանի մասին հավաքելով արժեքավոր տեղեկություններ: Երզրումում ստեղծվում է Հայ զինվորական խորհուրդ, որը պետք է կառավարեր ամբողջ Կովկասյան ճակատը՝ սեփական, հայկական ուժերով: Իր հուշագրության մեջ Դեոյանցը պատմում է, որ ինքը կարգադրում է ձերբակալել էրզրումցի Յ Հայտնի տաճիկ պարագլուխների, որոնք մեղադրվում էին հայկական կոտորածների մեջ և հանձնում է զինվորական դաշտային դատարանին, որի վճռով էլ նրանք կախաղան են բարձրացվում: Երբ Դեոյանցը դառնում է Կովկասյան բանակի սպայակույտի հակահետախուզական բաժանմունքի պետ, համապատասխան միջոցառումներ է ձեռնարկում՝ ձերբակալելով Երզնկայի շրջանի՝ հակառակորդի գրեթե բոլոր լըրտեսներին, որոնց գործի քննությամբ թիֆլիսում զբաղվում են 65 քննիչներ, սակայն հետագայում այդ գործակալները կասկածելի հանգամանքներում ազատ են արձակվում<sup>36</sup>: Ըստ Երևույթին՝ դա կապված էր վրացական կողմից ցանկության հետ՝ չվտանգել վրացթուրքական բավական շահավետ բարեկամական կապերը:

Տիգրան Դեոյանցի գործունեության այդ փուլը ևս լի է հիշարժան փաստերով և իրադարձություններով: Երբ 1918 թ. ապրիլի 25-ին Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրով դատարկվում է Կարսի մարզը, ռազմաքաղաքական իրադրությունը սկսում է դասավորվել ոչ ի նպաստ հայերի: Վրացիները այդ շրջանում սկսում են կատարել «տրոյական ձիու» դեր, որի մասին հիշատակում է Տ. Դեոյանցը. «Այստեղ շատ տխուր դեր էին կատարել Զինենկելին եւ զօր. Օդելելիդչեն (Օդիշելիձե Իլյա Զ. - Վ. Վ.)<sup>37</sup>: Վերջինը մեղադրում էր արդէն լրտեսութեան մէջ ի նպաստ Գերմանիոյ արեւմտեան ճակատում: Իսկ երբ նա տեղափոխուեց որպես հրամանատար Կովկասեան ճակատը, ես բռնեցի նրա գաղտնի նամակները,

<sup>36</sup> Դէոյեանց Տ., Կեանքիս դրուագներից (Հայրենիք, Բոստոն, 1944, N 3, մայս-յունիս, էջ 96):

<sup>37</sup> Նա դարձավ մենշևկյան անկախ Վրաստանի ռազմական նախարար, որի առաջին գործերից մեկը եղավ բանտից 6-700 տաճիկ լրտեսների ազատ արձակելը, բացի մեկ-երկու հոգուց, որոնց հետ Դեոյանցը հանդիպում է 1919 թ.: Մետեխիքանտում եղած ժամանակ (Դէոյեանց Տ., Կեանքիս դրուագներից (Հայրենիք, 1944, N 5 (244), սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 85-86, 1945, N 1 (246), յունուար-փետրուար, էջ 54), Մշակ, Թիֆլիս, 29 XII.1918, N 269, 7.I.1919, N 5, 31.I.1919, Կավազսկոյ լուսադրություն, Տիգրան Դեոյանցի համար, 1944, N 3, մայս-յունիս, էջ 96):

ուղղուած Վէհիք փաշային, եւ յայտնեցի նրա սպայակոյտի պետ զօր Վիլինսկուն»<sup>38</sup>:

Անդրկովկասյան Հանրապետությունների անկախության շրջանում Տ. Դեռյանցին նոր փորձություններ էին սպասվում: Թիֆլիսում նա այցելում է Հայաստանի Հանրապետության գինվորական ներկայացուցիչ գեներալ Հովսեփ Քիշմիշյանին, որը հայտնում է, թե շուտով պատերազմի մեջ են մտնելու վրացիների հետ, ուստի անհրաժեշտ է տեղեկություններ հայթայթել վրացական զորքերի դասավորության և զորահավաքի մասին, ինչպես նաև վրացական ժողովրդական գվարդիայի քանակի և գործողությունների պլանի մասին: Դեռյանցը, օգտագործելով իր բոլոր կապերը Վրաստանի մայրաքաղաքում, շտապ ձեռք է բերում անհրաժեշտ տեղեկատվություն, որն էլ Քիշմիշյանը հույժ գաղտնի ծածկագրով ուղարկում է Երևան՝ ակնկալելով, որ այն, օգտակար կլինի վրաց-հայկական բախումների ժամանակ՝<sup>39</sup>:

Այնուհետև Տիգրան Դեռյանցը, որպես փորձառու հետախույզ, մասնակցում է Հայաստանի Առաջին Հանրապետության և արդեն հետախուզական ծառայության ձեւավորման բարդ, հակասական և չափազանց դժվարին գործառութներին՝ դառնալով նորաստեղծ զինվորական նախարարության Գլխավոր շտաբի Հետախուզական և հակահետախուզական բաժանմունքի պետերից մեկը, ծավալում հայրենանպաստ գործունեություն:

1918 թ. մայիսին, գնացքով Վրաստանի Հանրապետության տարածքով անցնելու ժամանակ, Տ. Դեռյանցը անակնկալ ձերբակալվում է Սամտրեղիա կայարանում վրաց միլիցիայի և հատուկ ծառայությունների կողմից՝ վրացական բանակի մատակարարման ճյուղի պետի մատնությամբ: Սա ժամանակին, Տ. Դեռյանցի հատուկ հրամանով, որպես տաճկական լրտես, մի շարք այլ անձանց հետ ձերբակալվել էր Երզնկայում: Բանտ տարվելու ճանապարհին Դեռյանցը հասցնում է ոչնչացնել մի շարք կարևոր, ծածկագրված թղթեր, որոնք կարող էին դիվանագիտական բարդությունների առաջ կանգնեցնել ՀՀ ռազմաքաղաքական ղեկավար շրջաններին: Տ. Դեռյանցի ձերբակալության օրը «վրաց հեռագրական գործակալութիւնը բաց էր թողել մի հեռագիր, որով հաղորդւում էր թէ կապիտան Տիգրան Դեռյեանցը՝ կովկասեան բանակի սպայակոյտի հակահետախուզական բաժանմունքի նախկին պետը, ձերլակալուել է Սամտրեղի կայարանի մէջ, մեղադրուում է լրտեսութեան մէջ եւ պէտք է յանձնուի զինուորական դատարանին»<sup>40</sup>: Նրան տանում են Մետեխի բանտ, որը լեփ-լեցուն էր հայերով: Այնտեղ էին գտնվում նաև մահվան դատապարտված հետախույզ, գնդապետ Շմագայլովը և Միխոն (Միխայիլ Քուչարյանց, որն իբր թե Հայ Յեղափոխական Դաշնակցության անդամ էր և, հետեւաբար, ըստ վրացիների ահա-

<sup>38</sup> Դեռյեանց Տ., Դրաստամատ Կանայեան (Դրօ) (Հայրենիք, Բոստոն, 1957, N 9, սեպտեմբեր, էջ 15):

<sup>39</sup> Դեռյեանց Տ., Կեանքիս գրուագներից, Հայրենիք (Բոստոն, 1944, N 6 (245), նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 80-81):

<sup>40</sup> Նույն տեղում, 1945, N 1 (246), Յունուար-փետրուար, էջ 54:

բեկիչ<sup>41</sup>: Վերջիններս անգլիացիների հրահանգով պայթեցրել էին Մցխեթի բանտի մերձակա Զեգվիի կամուրջը՝ խոչընդոտելու համար գերմանացիների ակնկալվող մուտքը թիֆիս, որի համար ձերբակալվել էին վրաց իշխանությունների կողմից, դատապարտվել 12 տարվա տաժանակիր աշխատանքի: Սակայն նրանք բրիտանական հատուկ ծառայությունների ջանքերով շուտով ազատվում են բանտից, իսկ Տիգրան Դեոյանցի հարցն ավելի է լրջանում: Նրա մասին տեղեկացվում է թիֆլիսում գտնվող՝ Հայաստանի դիվանագիտական հավատարմատար Լ. Եվանգուլյանը, որը բանտում բծավոր տիֆով վարակված Տ. Դեոյանցին Օրթաճալայի բանտը տեղափոխելուց հետո որոշ ջանքեր է գործադրում, որ հիվանդին այցելեն հայ բրձիշկներ: Ապա նրա մասին տեղեկացնում է Հայաստանի իշխանություններին, զինվորական ու արտաքին գործերի նախարարներին, ինչպես նաև Տ. Դեոյանցի հարազատներին, որոնք ամեն գնով փորձում էին բանտից անհապաղ ազատել նրան և տեղափոխել Հայաստան<sup>42</sup>: Զինվորական նախարարին հասցեագրված՝ Հայկական դիվիզիայի պետ, գեներալ-մայոր Մ. Սիլիկյանի՝ 1919 թ. մարտի 1-ի N 26/19 գեկուցագրից տեղեկանում ենք, որ թիֆլիսում վրացական հակահետախուզության կողմից ձերբակալվել է Հայկական զորամասերում, տվյալ պահին՝ Կամավորական բանակում ծառայության մեջ գտնվող Տ. Դեոյանցը և դատապարտվել գնդակահարության: Սիլիկյանը հայտնում էր, որ անգլիացիները բողոքել են դատարանի այդ որոշման դեմ, քանզի Հայկական իշխանությունները Դեոյանցի գործի կապակցությամբ դիմել են իրենց՝ խնդրելով ազդել վրացիների վրա Դեոյանցին բանտից ազատելու հարցում: Դատարանի որոշումը չի կիրառվում Տ. Դեոյանցի հիվանդության պատճառով: 1919 թ. մարտի 7-ին Հայաստանի արտաքին գործերի նախարար U. Տիգրանյանը Վրաստանի արտգործնախարար Ե. Գեգեչկորիին ուղղված հեռագրում խնդրում է կասեցնել դատավճիռը<sup>43</sup>: Սակայն ՀՀ արտգործնախարարին հասցեագրած 1919 թ. մարտի 25-ի հեռագրում (N 1661), ի պատասխան N 485 դիմումի, Վրաստանի արտաքին գործերի նախարարի օգնական Կ. Սաբախտարիչվիլին հայտնում է, որ Դեոյանցը մեղադրվում է ուազմական լրտեսության մեջ, հետաքննությունը չի ավարտվել, և գործը պետք է լսվի դատարանի նիստում<sup>44</sup>: Վերջի վերջո, Տիգրան Դեոյանցը փախչում է Մետեխի բանտից<sup>45</sup>: Մինչ այդ նա մի ընդարձակ նամակով դիմում է ՀՀ դիվանագիտական հավատարմատար Լ. Եվանգուլյանին՝ տեղյակ պահելով պատերազմական ատյանի զինվորական քննիչ Կեկելիձեի հարցաքննությունների մասին և խնդրելով, որ Եվանգուլյանը օգնի իր փախուստը կազմակերպելուն, և այդ նպատակի համար

<sup>41</sup>Տե՛ս Մշակ, 29 XII. 1918, N 269, 7.I. 1919, N 5, 31.I. 1919, N 23, Աշխատավոր, Թիֆլիս, 3.V. 1919, N 85, Կավказское слово, Տիֆլис, 30.I. 1919, N 10.

<sup>42</sup>Դեոյեանց Տ., Կեանքիս դրուագներից (Հայրենիք, 1945, N 1(246), յունուար-փետրուար, էջ 54):

<sup>43</sup>ՀԱԱ, ֆ. Պ-200, ց. 1, գ. 1, թ. 64, գ. 211, թ. 40:

<sup>44</sup>Նույն տեղում, գ. 1, թ. 111:

<sup>45</sup>Դեոյեանց Տ., Հետախոյզի մը յուշերը (Յունուար-Մայիս, N 2, էջ 71):

խնդրում է 700 ռուբլի դրամ։ Նրա փախուստի կազմակերպիչներից էր Դեոյանցի մերձավորներից մեկը Ասյան։ Օգտագործելով կեղծ փաստաթղթեր, ինչպես նաև կաշառելով բանտի պաշտոնյաներին ու վերակացուներին Տ. Դեոյանցը իրականացնում է փախուստը և Ասյայի հետ հայտնվում է Երևան ուղևորվող գնացքում։ Այդ մասին նա գրում է իր հուշերում. «Եւանգուլեանը ծածկագիր հեռագրել էր Երեւան, եւ Հայաստանի հեռագրական գործակալութիւնը իմ Երեւան հասնելուս միջոցին, արդէն բաց էր թողել հետեւեալ հեռագիրը. «Կովկասեան բանակի սպայակոյտի հակահետախուզական բաժանմունքի նախկին պետ կապիտան Տիգրան Դեւոյեանցը, որը ձերբակալված էր վրացիների կողմից և մեղադրւում էր լրտեսութեան մէջ, յաջող կերպով փախչելով Մեդեխի բանտից, հասաւ Երեւան եւ նշանակուեց Հայաստանի բանակի հետախուզական եւ հակա-հետախուզական բաժնի պետի պաշտօնին»։

Երեւան հասնելուն պէս, ինձ կանչեց իր մօտ մեր պատերազմական նախարար զօր. Արարատեանը, որին ներկայացայ ալիւրի տոպրակից կարած բլուզով։ Այստեղ էր նաեւ զօր. Կ., Հայաստանի զինուորական կցորդը Վրաստանում։ Նա հանեց իր վրայի սուրը, համբուրեց ինձ եւ յանձնեց իբր նուեր»<sup>46</sup>։ Հիրավի, հայրենասիրական, դաստիարակչական լիցք պարունակող մի իրադարձություն, որ կարող է զարդարել ցանկացած ժողովրդի պատմությունը։ Առաջին հանրապետության կայացման բարդ գործընթացների պայմաններում, Տիգրան Դեոյանցն իրականացնում է հետախուզական եռանդուն աշխատանքներ Վան-Մուշ-Բիթլիս շրջանում, իսկ 1919 թ. վերջին - 1920 թ. սկզբին հայտնվում է Կ. Պոլսում<sup>47</sup>, որտեղ կազմակերպում է հետախուզական խումբ՝ հայթայթելով Հայաստանի Հանրապետության ազգային-պետական անվտանգության ապահովման տեսանկյունից արժեքավոր տեղեկություններ թուրքական զինուժի թվաքանակի և նախապատրաստությունների, ինչպես նաև հայկական սահմանի ողջ երկայնքով թուրքական զորքերի տեղաբաշխման մասին։ Տ. Դեոյանցը կյանքի վերջին շրջանում հանգրվանում

<sup>46</sup> Դէոյեանց Տ., Կեանքիս դրուագներից (Հայրենիք, 1945, N 1(246), յունուար-փետրուար, էջ 59-60)։

Ասենք, որ առանդաշատ այս հայ հետախույզի հետագա գործունեությունը լիովին պարզաբանված չէ։ Դասեկով որոշ փաստերից ակնհայտ է դառնում, որ Առաջին հանրապետության անկումից և երկրի խորհրդայնացումից հետո Տիգրան Դեոյանցի, ինչպես նաև հետախույզներ նազարբեկովի, Դվերնիցկու, Գրիգորի և աշատուրյանի անունները հայտնվել են ազատված և ծառայության վայրերում թողնված այն սպաների ցուցակում, որոնք պետք է ուղարկվեին Բաքու ԽI Կարմիր բանակի շտաբի տնօրինության տակ (տե՛ս ՀԱԱ, ֆ. Կ-113, ց. 3, գ. 3, թ. 40-47, 53, 68-70 և այլն)։

<sup>47</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս Վիրաբյան Վ. Հայաստանի Հանրապետության Պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը, Ե., 2006, 119-130, 181-182, նույնի՝ Հայաստանի Հանրապետության հետախուզությունը և բանակը 1918-1920 թթ., Ե., 2009, էջ 34-63, նույնի՝ Հայկական հետախուզական խմբի գործունեությունը Կ. Պոլսում Տիգրան Դեոյանցի գլխավորությամբ 1919 թ. երկրորդ կեսին - 1920 թ. սկզբին [Տարեգիրք, Բ (պատմագիտական հանդես), Ե., 2010, էջ 134-150]։

է ԱՄՆ-ի Բոստոն քաղաքում և այստեղ հրապարակում բարձրարձեք Հուշագրություն իր Հետախուզական գործունեության մասին:

## О РАЗВЕДЫВАТЕЛЬНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ ТИГРАНА ДЕВОЯНЦА

ВИРАБЯН В. Г.

### Резюме

В годы Первой мировой войны на Кавказском фронте в составе 4-го корпуса русской армии в разведывательном отделе служил известный разведчик Тигран Девоянц, в отношении которого был возбужден судебный процесс. Однако на Всеобщем 9-ом собрании партии Даշнакցւյոն Ձր (Драстамат Канаян) выступил в защиту Тиграна Девоянца, заявив, что он не повинен в отступлении русской армии в июле 1915 г. в направлении Ван-Маназкерт, имевшем пагубные последствия для армян. В годы Первой Республики сотрудник армянской разведывательной службы Тигран Девоянц возглавлял отдел разведки и контрразведки Генерального штаба Военного министерства. Он был направлен в Ван, Муш, Битlis, далее – в Константинополь, где им была организована разведывательная группа, которая собирала необходимую для Республики Армения информацию о возможной дислокации турецких войск на армянской границе, их военной мощи и т.д.

**ՔԱՂԱՔԻ ՀԱՆԳԵՍ, ԼՈՒՅԻ Է ՏԵՄՆՈՒՄ 1940 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻՑ  
ЖУРНАЛ ВЫХОДИТ 3 РАЗА В ГОД, ИЗДАЕТСЯ С НОЯБРЯ 1940 ГОДА**

**Գլուխակոր Խմբագիր ԱԼԲԵՐՏ Ա. ԽԱՐԱՏՅԱՆ**

**Խմբագրական խորհուրդ**

**ԱՂԱՍՅԱՆ Ա.Վ., ԲԱՐԽՈՒԴՅԱՐՅԱՆ Վ.Բ., ԳԵՎՈՐԳՅԱՆ Հ.Ա.,  
ԵՎԻԱԶԱՐՅԱՆ Ա.Կ., ԵՎԻԱԶԱՐՅԱՆ Լ.Կ., ԽԱԶԱՏՐՅԱՆ Լ.Մ.,  
ԽՈՋԱԲԵԿՅԱՆ Վ.Ե., ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Ռ.Կ., ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Բ.Հ.,  
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Գ.Գ. (պատ. քարտուղար), ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Վ.Լ.,  
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ն.Հ., ՍԵԼՔՈՆՅԱՆ Ա.Ա.**

**Главный редактор АЛЬБЕРТ А. ХАРАТЯН**

**Редакционная коллегия**

**ԱԳԱՍՅԱՆ Ա.Վ., ԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Վ.Ա., ԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Գ.Գ. (отв. секретарь),  
ԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Վ.Լ., ԲԱՐԽՈՒԴՅԱՐՅԱՆ Վ.Բ., ԳԵՎՈՐԿՅԱՆ Հ.Ա., ԵԳԻԱԶԱՐՅԱՆ Ա.Կ.,  
ԵԳԻԱԶԱՐՅԱՆ Լ.Ա., ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Ռ.Կ., ՄԵԼԿՈՆՅԱՆ Ա.Ա., ՕԳԱՆԵՍՅԱՆ Հ.Օ.,  
ԽԱՉԱՏՐՅԱՆ Լ.Մ., ԽՈԴՋԱԲԵԿՅԱՆ Վ.Ե.**